ՀՀ Արագածոտնի մարզի
«Սարալանջի հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի

2023-2027 թվականների գործունեության

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Տնօրենի հավակնորդ՝
Ռուզաննա Վոլոդյայի Մնացականյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱԲԱՆ

Ներածական խոսք 3

Դպրոցում հանրակրթության կազմակերպման սկզբունքները և մոտեցումները 4

Ընդհանուր դրույթներ 5

ԲԱԺԻՆ 2. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 6

ԲԱԺԻՆ 3. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Դպրոցի առաքելությունը 7

Դպրոցի առկա իրավիճակը 8

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը 10

ԲԱԺԻՆ 4. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակները 15

Դպրոցի զարգացման ծրագրի գերակայությունը 16

Ծրագրված խնդիրների լուծմանը խոչընդոտող հավանական գործոնների վերլուծությունը 17

ԲԱԺԻՆ 5. ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի տնօրենի գործունեության հիմնական սկզբունքները 18

Դպրոցի տնօրենի կադրային քաղաքականությունը 19

ԲԱԺԻՆ 6. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 20

ԲԱԺԻՆ 7. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վարչական աշխատանք 28

Ուսումնական գործընթացի կազմակերպում 29

Ուսումնաօժանդակ գործառույթի իրականացում 32

Դաստիարակչական աշխատանքի կազմակերպում 33

Ուսումնադիտողական և վերահսկողական գործառույթ 34

Աշխատանք մասնախմբի հետ 37

Կազմակերպչական աշխատանքներ 38

Աշխատանք ծնողների հետ 39

Վարչատնտեսական աշխատանքների կազմակերպում 40

Ֆինանսատնտեսական գործունեություն 41

Համադպրոցական միջոցառումներ 42

Մանկավարժական խորհրդի նիստեր 44

ԲԱԺԻՆ 8. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծման ուղիներ 47

Դպրոցի զարգացման ծրագրից ակնկալվող արդյունքներ 55

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽԱԲԱՆ
ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

«ՀՀ հանրակրթության մասին» օրենքով հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է: Դրա համար շատ կարևոր է, որ սովորողը գիտակցի, որ գիտությունը, արդի տեխնոլոգիաները կրթության մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում: Ժամանակակից աշխարհում գիտական նվաճումներին տիրապետելը ոչ միայն կարևոր է, այլև անհրաժեշտ: Ազգային, քաղաքական, տնտեսական որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության: Ամեն ինչ սկսվում է կրթությունից և վերջանում կրթությամբ:

Արագ փոփոխվող աշխարհը իր անմիջական ներգործությունն է ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Այսօր առավել քան երբևէ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո մեր պետությունը շարժվում է ժողովրդավարության ճանապարհով: Իմ կարծիքով այս գործոնը նույնպես արժևորում է կրթության դերը:Մարդը հռչակվում է բարձրագույն արժեք՝իր իրավունքներով,ազատությամբ և արժանապատվությամբ: Այստեղ հանրակրթական դպրոցի խնդիրն է սովորողի մոտ զարգացնել համակեցություն, հանդուրժողականություն, համագործակցելու կարողություն և այլ որակներ: Շատ կարևոր եմ համարում նաև ազգային դաստիարակությունը: Մենք սերունդն ենք մի ժողովրդի, որ դեռևս վաղնջական ժամանակներից կարևորել է հայրենիքը, մշակույթը, դպրոցը, գիրն ու գրականությունը, որոնք նպաստել են սերունդների կրթությանը, դաստիարակմանն ու հարատևմանը: Ես՝ որպես հայ մարդ և մանկավարժական համակարգի աշխատող, կարևորում եմ դպրոցի դերը և կարծում, որպետք է որդեգրել այնպիսի ծրագրի ռազմավարություն, որի գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես ակտիվ, աշխատասեր, գործունյա և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի զարգացումն է: Պետության և ազգի կայացման, հզորացման գործում շատ կարևոր է ազգային-պետական մտածելակերպ, քաղաքացիական կեցվածք ունեցող, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժվարություններին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այս գործոններով պայմանավորված հանրակրթության ոլորտում անհրաժեշտ է դառնում ուսուցման ավանդական մոտեցումների հետ միասին ստեղծագործաբար մոտենալ կյանքի առաջադրած խնդիրներին, կատարել որոշակի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, շարունակել բարձրացնել ՏՀՏ-ի դերը կրթական համակարգում:

ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Դպրոցում հանրակրթության գործընթացը կազմակերպելիս հարկավոր է կրթությունն իրականացնել ազգային հենքի վրա՝համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ՝

1. Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու շահերին, ծառայի անհատին և ժողովրդին:
2. Հանրակրթությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով, որը նպատակաուղղված է հայոց լեզվի, հայժողովրդի մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, ազգային ինքնության և միասնության ապահովմանը:
3. Հանրակրթությունն իրականացնել ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելով դրա աշխարհիկ բնույթը,զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Այն հավասարապես մատչելի է յուրաքանչյուրին՝անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:
4. Ապահովել «ՀՀ կրթության մասին օրենքով»հիմնական կրթության հասանե-լիությունը յուրաքանչյուր անձի համար, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:
5. Հանրակրթությունը դպրոցում իրականացնել սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

1. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին»,«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Գնումների մասին» ՀՀօրենքով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀօրենքով, այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով:
2. ՀՀ Կառավարության սահմանած«Հանրակրթության պետական չափորոշիչի»դրույթներով:
3. ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագրով:
4. ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի <<Սարալանջի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Հաստատության սովորողների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները՝ իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38 հոդվածով (2015թ. դեկտ. 6-ի փոփ. համաձայն) երաշխավորված կրթության իրենց իրավունքը:

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի զարգացման 2023-2027թթ. սույն ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի նախորդ ուսումնական տարվա հաշվետվությունը, մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները:

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի զարգացման ծրագրի մշակման համար կատարվել են հետևյալ քայլերը՝

1. սահմանվել է դպրոցի առաքելությունը,
2. վերլուծվել է առկա իրավիճակը, բացահայտվել եղած հիմնախնդիրները,
3. սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,
4. սահմանվել են հիմնական գերակայությունները, մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,
5. սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,
6. սահմանվել է ֆինանսատնտեսական գործունեությունը,
7. կատարվել է ռիսկերի գնահատում և դրանց կանխարգելման քայլեր,
8. ենթադրվել են ծրագրից ակնկալվող արդյունքները:

ԲԱԺԻՆ 2.
ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դպրոցի անվանումն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» ՊՈԱԿ,

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարաության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.01.2003թ.-ին:

Գրանցում.№49.210.00251

ՀՎՀՀ 05201711

Դպրոցական շենքը կառուցվել է 2003 թվականին, որը տիպային է:Մասնակի վերանորոգվել է 2020թ-ին:Դպրոցն ըստ ՀՀԿԳՆ 2010թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1727-Ա/Ք հրամանով տրված N0084/տարրական/, N0079/հիմնական/լիցենզիաների իրավունքունի իրականացնելու-տարրական ընդհանուր 1-ին աստիճան՝50 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան՝50 սահմանային տեղով մինչև 100 աշակերտ-տեղ հզորությամբ: Շենքը մեկ հարկանի է՝456.8մ^2 մակերեսով, դպրոցամերձ բակը 0.4208 հա է:

2022-2023 ուսումնական տարվա սկզբին դպրոցը ունեցել է 17 սովորող,կոմպլեկտավորվել է 4 դասարան:

Դպրոցում այսօր առկա է 9 դասասենյակ , 1 գրադարան /հարմարեցված/,1 ճաշարան1պահոց սենյակ, 1համակարգչային սենյակ,1 բազմաֆունկցիոնալ համակարգիչ,8 դյուրակիր համակարգիչ,որոնցից 4-ը ունեն տեխնիկապես վերազինման կարիք,1 պրոյեկտոր ,/, 3 սանհանգույց, որոնցից գործում են 3-ը:Դպրոցը ջեռուցվում էլ.սալիկներով:

Դպրոցն ունի 15 հոգուց բաղկացած անձնակազմ: Դպրոցում աշխատում են10 ուսուցիչ, որոնցից 9-ը կանայք են: Բարձրագույն կրթությամբ՝8, միջնակարգ մասնագիտական՝2: 4ուսուցիչ աշխատում են համատեղությանբ:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը1/2 է: Ուսուցիչների միջին շաբաթական ծանրա- բեռնվածությունը մոտավորապես 15,6ժամէ:

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի ծնողական, մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները հնարավորինս արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

ԲԱԺԻՆ 3. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթությունը կյանքին նախապատրաստվելը չէ: Կրթությունը հենց կյանքն է:

Շատ հաճախ երազանքները սկսվում են աշակերտին հավատացող ուսուցչից: Որակյալ կրթության ապահովումը՝ ապագան ամուր հիմքերի վրա կառուցելու միակ ճանապարհն է:

Դպրոցը երեխայի համար պետք է դարձնենք հաճելի և սիրելի միջավայր, որտեղ պետքէ կերտվեն ազատ, քննադատական և վերլուծական մտածելակերպ ունեցող քաղաքացիներ: Աշխարհում չկա ավելի մնայուն արժեք, քան կրթությունը, չկա ավելի կարևոր ներդրում, քան սեփական գիտելիքների փոխանցումը, և չկա ավելի արժանապատիվ քայլ, քան ինքնակրթությունն է:

Բարեփոխումների շոշափելի և հասարակության կողմից արժևորվող ձեռքբերումների բացակայության պատճառով դպրոցը ամբողջ կրթական համակարգի հետ հայտնվել է մի իրավիճակում, երբ խաթարված է կրթական հաստատությունների հեղինակությունը, վտանգված է վստահությունը բարեփոխումների և համակարգի ներուժի նկատմամբ:

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի առաքելությունն է.

1. Տարածաշրջանում ձեռք բերել բարձր վարկանիշ, լինել մրցունակ և բարի համբավ ունեցող հանրակրթական դպրոց,
2. Ակտիվացնել համայնքի հետ համագործակցությունը, դառնալ համայնքի սոցիալ- մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց,
3. Սովորողներին ազգային հենքի վրա տալ որակյալ կրթություն,
4. Նախապատրաստել նոր տեխնոլոգիական ուսուցման և ժամանակի հետ համահունչ քայլող հասարակության անդամ,
5. Ձևավորել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիներ, որոնցից յուրաքանչյուրը կյանքում կլինի կարողունակ,կոմպետենտ,հաջողակ քաղաքացի:

Ընդհանրապես կրթական հաստատությունների,իսկ մասնավորապեսՍարալանջի հիմնական դպրոցի հեղինակության բարձրացումը, բարեփոխումների նկատմամբ և դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ուժերի նկատմամբ եղած վստահության ամրապնդումն ու բարձրացումը այս հնգամյակում դպրոցի առաքելության բաղկացուցիչներից մեկն է լինելու,քանի որ և՛ հասարակական գիտակցության,և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը՝ հատկապես որակյալ կրթությունը,շարունակում է մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ
Տնօրեն	1
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Ուսուցիչների ընդհանուր թիվը	10
Սովորողների թիվը	17
Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ	8
Համատեղությամ բաշխ.ուսուցիչներ	4
Ուսուցիչ/սովորող փոխհարաբերությունը	1/2
Ուսուցիչների միջին շաբաթ.ծանրաբեռնվածություն	15.6 ժամ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ	
ԴԱԿ	0.5
Գրադանավար	0.5
ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Հավաքարար	1
Պահակ	2
Դռնապան	0.5
Հաշվապահ	0.5

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆԿԱԶՄԸ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ	ԹԻՎԸ	ՏՈԿՈՄԸ
Մինչև 30 տարեկան	1	10%
31-40 տարեկան	1	10%
41-50 տարեկան	2	20%
51-55 տարեկան	1	10%
56 և ավելի տարեկան	5	50%

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ ➢ Համախմբված են նպատակի շուրջ ➢ Դպրոցի առաքելություն նիրականացնող խնդիրների լուծմանը ունեն մասնագիտական և քաղաքացիական բարձր պատասխանատվություն	1.Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր՝ ➢ Դասալսումները ոչ լիարժեք են կատարվել ➢ Աշխատանքային պլաններում չկան հիմնավորումներ,առկա են ձևական,վերացական ձևակերպումներ ➢ Դպրոցը ներառական կրթության երեխաներ չունի,բայց չկան նաև պայմաններ և այդ ուղղությամբ աշխատանքներ չեն կազմակերպվել
Ուսուցչական համակազմի մեծ մասն ունեն ➢ Երկարամյա փորձ ➢ Մասնագիտական բարձր կարողություններ, թիմային աշխատանք ➢ Կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն ➢ Երիտասարդ կադրերը տիրապետում են հ ամակարգչային և ժամանակակից մեթոդներին ➢ Անցել են վերապատրաստումների և ունեն բարձր պատասխանատվություն և հեղինակություն ➢ Ապահովված են ծրագրերով, ուսումնամեթոդական գրականությամբ ➢ Համատեղում են հին և նոր մեթոդները: ➢ Տարվա ընթացքում կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, էքսկուրսիաներ	• Ուսուցչական համակազմի թույլ կողմեր. ➢ Ուսուցիչները չեն աշխատում տարակարգի հ ամար, ➢ Պասիվ է առաջավոր մանկավարժական փորձի փոխանակման գործընթացն սկսնակ ուսուցիչների ➢ Փոխադարձ դասալսումները քիչ են ➢ Նորամուծությունների նկատմամբ առկա է մանկավարժների հետաքրքրության որոշակի պակաս

2. Սովորողների ուսումնառությանն դաստիարակության ուժեղ կողմեր ➢ Սովորողները մասնակցել են օլիմպիադայի դպրոցական, տարածքային,մարզային փուլին ➢ Ամուր հիմքերի վրա է«լեզուների» դասավանդման դրվածքը ➢ Գործունեություն է ծավալում աշակերտական խորհուրդը ➢ Սովորողները մասնակցել են հանրապետական շախմատի օլիմպիադայի դպրոցական,տարածքային փուլին	2. Սովորողների ուսումնառության ևև դաստիարակության թույլ կողմեր ➢ Բնագիտական առարկաներից օլիմպիադայի մասնակիցներ մարզային և հանրապետական փուլերում քիչ են ➢ Բնագիտական առարկաների գործնական պարապմունքների ցածր արդյունավետու թյուն ➢ Դասապրոցեսի ընթացքում համակարգիչների անբավարար քանակ ➢ Մրցակցություն ոչ թե գիտելիքի, այլ գնահատականի համար
3. Ծնողների,համայնքի,կառավարմանխորհուրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր ➢ Համագործակցում և աջակցում են դպրոցին ➢ Կառավարման խորհուրդը իր գործունեությամբ նպաստում է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը ➢ Համայնքապետարանի կողմից կազմակերպվում է աջակցություն սեպտեմբերի1-ի,ուսուցչի օրվան վերջին զանգի միջոցառումների համար	3. Ծնողների,համայնքի,կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր ➢ Կա նախաձեռնության պակաս,որը պայմանավորված է ծնողների պասիվությամբ ➢ Հոգաբարձուների խորհրդի բացակայություն ➢ Չի նկատվում համայքապետարանի ակտիվ աջակցությունը դպրոցին

4. Ռեսուրսներով ապահովվածությունը	4. Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները
➢ Դպրոցն ապահովված է կադրային ռեսուրսներով ➢ Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը1/2 է ➢ Ապահովված է որոշակի գույքով,ինտերնետկապով ➢ Գրադարանն ապահովված է դասագրքերով,ծրագրային գրականությամբ ➢ Առկա է սանհանգույցը և մշտական ջրամատակարարում,	➢ Համակարգիչների 50 տոկոսը ֆիզիկապես մաշված է ➢ Դպրոցի շենքն ունի մասնակի վերանորոգման կարիք ➢ Դպրոցի նյութատեխնիկական բազայի, գո ույք-սարքավորումների սակավություն ➢ Գրադարանում քիչ են էլեկտրոնային ձեռնարկներ ➢ Պակաս է մասնագիտական գրականությունը ➢ Արհեստանոցի բացակայություն և ձեռնարկատիրական գործունեության բացակայություն ➢ Առկա գույքի մի մասի ֆիզիկական մաշվածություն ➢ Մարզահրապարակների բարեկարգման բացակայություն ➢ Նորմատիվներին համապատասխան մարզադահլիճի բացակայություն ➢ Թեքահարթակների բացակայություն և սանհանգույցների անհամապատասխանություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար

Հնարավորություններ	Վտանգներ
1. Ուսման որակի նոր հաջողություններ ա) լեզուների և լրացուցիչ կրթական ծրագրի գործարկում բ) արտադասարանական խմբակներում սովորողների ընդգրկում՝ վիքիպեդիա, ռոբոտաշինություն և այլն գ) սպորտային,բնապահպանական,գիտական մրցույթներին մասնակցություն դ) Արմաթ լաբորատորիայի և ռոբոտաշինության խմբակի ստեղծում ե) էկոլոգիական կուլտուրայի, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացում զ) սովորողների և ուսուցիչների մոտ ձևավորել մեդիագրագիտություն, կարևորել դրա նշանակությունը է) միջազգային ծրագրերի մասնակցություն, այդ թվում Իթվինինգ պլյուս(eTwinning +) ը) ոչ ֆորմալ կրթության ներդրում՝Հայերեն վիքիպեդի այում հոդվածների ստեղծման գործիքների տիրապետ ում և կիրառում, թ) դպրոցը համայնքի համար դարձնել կրթամշակութային կենտրոն։ ժ) աշխատանքներ տանել ուսուցիչներին կամավոր ատեստավորման գործում	1. Աշակերտների թվի կրճատման հետ կապված բյուջեի նվազում 2. Աշակերտների թվի հնարավոր տարեկան նվազում արտագաղթի և ծնելիության հետ կապված 3. Ուսման նկատմամբ հետաքրքրության պակաս 4. Ազգային,բարոյական արժեքների ոչ ճիշտ գնահատում, օտարացում, արժեքային համակարգի նկատմամբ ոչ ճիշտ դիրքորոշում:

2. Հասնել շենքային պայմանների բարելավմանը՝ ա) միջանցքների և դասասենյակների հատակի ամբողջական վերանորոգում բ) ներսի դռների փոխարինում գ) վերազինել համակարգչային լսարանը հեռավար ուսուցման կիրառման նպատակով, ապահովել էլ եկտրոնային գրատախտակով դասերի վարում: դ) գույքայինռեսուրսների հայթաթում,հարստացում, ե) մարզահրապարակի բարեկարգում,, ֆուտբոլի դաշտի և վազքուղու բարելավում զ) գրադարանը էլեկտրոնային ռեսուրսի վերածում խ) դպրոցի պատմության վերաբերյալ հուշատախտակի ստեղծում է) դպրոցի հիմնի և տարբերանշանի ստեղծման նախաձեռնում ը) դպրոցի միջանցքնեի ձևավորում հայրենասիրական արժեքներին համապատասխան	

ԲԱԺԻՆ 4. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը կոչված է ապահովելու դպրոցի բարեփոխումների նպատակով առանձնացված հետևյալ խնդիրների լուծմանը՝

1. ուսմանարդյունավետության բարձրացում՝վարկանիշավորման ցուցանիշի բարելավում,
2. դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, ամրապնդում, բոլոր առարկաների դասավանդման ընթացքում ՏՀՏ-ի կիրառում
3. դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում
4. մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, վերապատրաստումների (այդ թվում ներառական կրթության ապահովմանը ուղղված) ու կամավոր ատեստավորման մասնակցության նպաստում՝ձգտելով տարակարգ ունեցող ուսուցիչների քանակական աճի
5. արտաբյուջետային միջոցների հոսքեր ապահովելու նպատակով համապատասխան քայլերի ձեռնարկում
6. ժամանակակից մեթոդներով և տեղեկատվությամբ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված կրթական գործընթացի համալրում,ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման բարձր մակարդակ
7. սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նախադրյալների ստեղծում
8. աշակերտական կառավարման համակարգի՝ ծնողների, ուսուցչական անձնակազմի և առհասարակ՝ հասարակության համար առավել բաց և մատչելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացում
9. դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդում, որը կնպաստի դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և իր ընտանիքի վերաբերմունքի և պատասխանատվության բարձրացմանը
10. Ներառական կրթության իրականցում՝ պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակյալ, մատչելի և հասնելիկրթության ապահովում՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից, ընդունակություններից:
11. Ներառաական կրթությունը կնպաստի հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման գործընթացի բարելավմանը, ուումնամեթոդական և ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետության ապահովմանը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում կրթության բնագավառի գերխնդիրը անկախ դպրոցի առաջադիմության և որակի տոկոսային ցուցանիշներց, շարունակում է մնալ կրթության որակի բարձրացումը և սովորողների կողմից իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Դրան նպաստելու համար անհրաժեշտ է ակտիվացնել դպրոցի խորհրդի դերը հետևյալ ուղղություններով՝

1. նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում,առաջարկությունների ներկայացում պետական լիազորված մարմիններին,
2. դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներ-կայացում,
3. կրթության պետական կառավարման մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
4. փորձի փոխանակաման, ուսուցիչների և աշակերտների փոխանակման նպատակով տեղական և միջազգային տարբեր կրթական հաստատությունների հետ կապերի հաստատում:
5. համագործակցում«Արմաթ»լաբորատորիայի ղեկավարության հետ և դպրոցում համապատասխան լաբորատորիայի ստեղծում, ռոբոտաշինությոան զարգացում դպրոցում, համագործակցում«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ
6. ինտերակտիվ դասերի որակի բարձրացում և կիրառվող գործիքների փոփոխություն
7. ժամանակակից պայմաններում կարևորվում է օտար լեզուների իմացությունը
8. ստեղծել ժամանակակից լաբորատորիաներ, համագործակցել «Իմ դպրոց», «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալներին, ԿԳՄՄՆ-ի կողմից երաշխավորված ԻԳործկազմակերպությանը, ԿՏԱԿ-ի Հեռավար ուսուցում դասընթացին
9. ՄիանալAwesome NatureArmenia բնապահպանական ծրագրին, Կայուն զարագացման համահայկական հիմնադրամին և PH International կազմակերպությանըև այլն:

ԾՐԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ առհասարակ՝ որևէ ծրագրավորված գործընթաց իր կատարման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարող են այս կամ այն կերպով խոչընդոտել նախաձեռնությանը: Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ու այդ գործոնների՝ դպրոցի գործընթացներում առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները:

Այդ գործոնների շարքին մասնավորապես հարկ ենք համարում դասել՝

- հավանական վտանգները՝ կապված ծրագրված խնդիրներին համարժեք ֆինանսավորման աղբյուրների սակավության և ֆինանսական ռեսուրսների անբավարարության հետ,
- ծնողի անտարբեր վերաբերմունքը դպրոցի և սեփական երեխայի նկատմամբ,
- հասարակության մեջ բարոյական արժեքների անկման միտումները,
- հասարակության մեջ տարածում գտած այնպիսի բացասական երևույթներն ինչպիսիքեն՝ծխելը,ալկոհոլիզմը,թմրամոլությունըև այլն,
- ԶԼՄ-ների միջոցով բացասական տեղեկատվության արագ տարածումը,
- աշակերտներիթվինվազումըկախված՝ ա)ծնելիության անկումից, բ)արտագաղթի մեծացումից,

գ)դպրոցի ներքին խնդիրներով չպայմանավորված այլ գործոններից:

- մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալ-տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանական լարվածության բացասական համադ-րությունը,
- բազմաթիվ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիան, քանի որ այն պահանջելու է մի քանի անգամ ավելի ուժ և եռանդ, որը ցավոք չի ապահովվելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում,
- դեռահասի հանգստի կազմակերպման հետ կապված միջոցառումներին ոչ բավարար մասնակցությունը՝կինո,թատրոն,թանգարան այցելելու համար անհրաժեշտ բարձր վճարների, դպրոցի սեփական տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով:

ԲԱԺԻՆ 5. ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ակնհայտ է, որ դպրոցի ղեկավարը իր գործունեությունը ծրագրելիս ընդգծի այն սկզբունքներն ու գերակայությունները, որոնք նա պլանավորում է սահմանել և գործածել տարբեր մարմինների, ղեկավարների, անձանց և աշխատակիցների հետ փոխհարաբերություններում:Նման սկզբունքների սահմանումը նրան թույլ կտա լինել հասկանալի և թափանցիկ բոլոր մարմինների հետ հարաբերություններում:

Համապատասխանաբար սույն ծրագրում արտացոլված բոլոր միջոցառումներն իրականացնելիս դպրոցի տնօրենը դպրոցի աշխատակիցների, գործընկերների, աշակերտների, ծնողների ,դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների, կրթության կառավարման լիազորված մարմնի և այլ պետական մարմինների հետ հարաբերություններում անվերապահորեն կդրսևորի հետևյալ հիմնական հատկանիշներըև սկզբունքները՝

- ազնվություն,
- օրինապահություն,
- պարտաճանաչություն,
- արդարամտություն,
- հարգալից և բարեհամբույր վերաբերմունք,
- պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն,
- փոխադարձ վստահություն և փոխադարձ համագործակցության պատրաստակամություն,
- աշխատանքի կազմակերպման հրապարակային սկզբունքներև թափանցիկություն,
- անձնակազմի յուրաքանչյուր անդամի կարևորության ընդգծում,
- իրավիճակային գործունեության ճկունություն
- ՀՀ կրթական ոլորտի բարեփոխմանն ուղղված բավարար ակտիվության դրսևորում և համապատասխան աջակցություն

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կադրերն ու նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը յուրաքանչյուր գործընթացում առանցքային դերակատարություն ունեն: Մենք նույնպես գիտակցում ենք դպրոցի անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետության կարևորությունը, իսկ այդ արդյունավետությունն անմիջականորեն բխումէնաև դպրոցի տնօրենի վարած կադրային քաղաքականությունից: Իհարկե անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետությունը չի կարող պայմանավորվել բացառապես դպրոցի տնօրենի վարած քաղաքականությամբ. հատկապես դպրոցի տնօրենի, ուսուցիչների և վարչական այլ աշխատողների վարձատրության չափերի և խրախուսման հստակ մեխանիզմների բացակայության առումով առկա են համընդհանուր խնդիրներ, որոնք թերևս հնարավոր է կարգավորել միայն հանրակրթության ոլորտում համընդհանուր սկզբունքներ սահմանելու և դրանք օրենսդրորեն ամրագրելու միջոցով: Այնուհանդերձ՝ առկա մեխանիզմների շրջանակներում դպրոցի տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացներն առավել բարելավելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հետևյալ ուղղություններով միջոցառումների իրականացում՝

1. Կադրերի համալրում՝ ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից,
2. մանկավարժական անձնակազմի պարբերական վերապատրաստում,
3. սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում,
4. մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում՝տարեկան կտրվածքով,
5. անձնակազմի գործունեության խրախուսում (պաշտոնական աճ, տարատեսակ պարգևատրումներ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասղեկ»և այլ անվանակարգերի սահմանում):
6. համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում փորձի փոխանակման և վերապատրաստման միջոցառումների իրականացում ոլորտի լավագույն մասնագետների հետ.

Թվարկված բոլոր միջոցառումներն էլ շատ կարևոր են, փոխկապակցված և միմյանց լրացնող, և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է շղթայաբար հարվածել անձնակազմի կառավարման բնագավառում կատարված մնացած միջոցառումների արդյունավետությանը:

ԲԱԺԻՆ 6. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կանմիջոցներ	Հնարավոր վտանգներ
Հոգաբարձուների խորհրդի բացակայություն	Ծնողական խորհրդի, համայնքիօգ-նությամբ, հնարավորության դեպքումստեղծելհոգաբարձուների խորհուրդ	Տնօրեն	2023-2024թթ.		Համայնքի պասիվություն
Դպրոցում գործող սանհանգույցի լիարժեք վերանորոգում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով, 2.Դիմել համայնքապետարանին խնդրիլուծմանը աջակցելու նպատակով 3.Փնտրել բարերարներ	Կառավարմանխորհուրդ Տնօրեն Ծնողական խորհուրդ, հաշվապահ	2023-2024թթ.	300,000 ՀՀ դրամ	Ֆինանասական միջոցների բացակայութուն
Միջանցքներին դասասենյակների ամբողջական վերանորոգում,ներքին հարդարման աշխատանքների իրականացում	1. Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում: 2. Դիմել համայնքապետարանին խնդրի լուծմանը աջակցելու նպատակով	Կառավարման խորհուրդ Տնօրեն Ծնողական խորհուրդ	2023-2024թթ.	5,500,000 ՀՀդրամ	1. Համայնքի պասիվություն 2. Մասամբ՝ ֆինանսական միջոցներ իբացա-կայություն

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողու-թյուններ	Պատասխանա տու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կան միջոցներ	Հնարավոր վտանգներ
Նյութատեխնիկա-կան բազայի հարստացում	1.Պետական ֆինանսավորման միջոց-ներիարդյունավետ օգտագործում	Տնօրեն,տնօրենի ուս.գծով տեղակալ	2023-2027թթ.	1,000,000 ՀՀդրամ (տարեկան)	Անհաղթահարելի իրավիճակներ
Համակարգչային լս արանի վերանորոգ ում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով, 2. Դիմել համայնքապետարանին խնդրի լուծմանը աջակցելու նպատակով 3.Փնտրել բարերարներ	Կառավարման խորհուրդ Տնօրեն	2023-2024թթ.	400,000 ՀՀդրամ (տարեկան)	Ֆինանասական միջոցների բացա կայություն,
Դպրոցի տարածքի ցանկապատում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով: 2. Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում 3.Դիմել համայնքապետարան խնդիրը լուծելու խնդրանքով	Կառավարման խորհուրդ, տնօրեն,տնօրենի տեղակալներ, ծնողական խորհուրդ	2023-2027թթ.	Պայմանավ որված տվյալ տարվա Ֆին. բյուջեով	1. Հոգաբարձուներ իխորհրդի ձևավորմանանին արինություն 2. Ֆինանսական միջոցներիբացա-կայություն

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կան միջոցներ	Հնարավոր վտանգներ
Դպրոցամերձ տարածքի բարեկարգում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրըլուծելու խնդրանքով: 2. Պետական ֆինանսավորման միջոց-ներիարդյունավետ օգտագործում 3.ՊՆնախարարության աջակցությանակնկալում	Տնօրեն	2023-2024թթ.	Պայմանա վորված տվյալ տարվա ֆին բյուջեով	1.Հոգաբարձուների խորհրդի ձևավորման անհն արինություն 2.Ֆինանսական միջոցն երի բացա-կայություն
Մարզադահլիճի ամբողջական վերանորոգում	1. Համապատասխան պահանջարկի և հնարավորությունների դեպքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն 2. Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում	Կառավարմանխո րհուրդ, տնօրեն,տնօրենի տե ղակալներ,ծնողակ ն խորհուրդ	2023-2027թթ.	Պայմանա վորված տվյալ տարվա Ֆին.բյ ուջեով	Հարկային պարտավո րություններ, Ֆինանասական միջոցների բացակայութուն

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողու-թյուններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա ցույց	Ֆինանսա-կանմիջոցն եր	Հնարավոր վտանգներ
Գրադարանը է լեկտրոնային ռեսուրսի,համ այքային ռեսուրս կենտրոնի վերածում	1. Պետական ֆինանսավորման միջոց-ներիարդյունավետօգտագործում, 2. Դիմել համայնքապետարանին խնդրի լուծմանը աջակցելու նպատակով	Կառավարմանխոր հուրդ, տնօրեն,տնօրենի տեղակալներ,Ծնող ական խորհուրդ	2023-2027թթ.	Պայմանավ որված տվյալ տարվա ֆին. բյուջեով	Մարզում նման կարիքներ ունեցող դպրոցների մեծ թիվ
Ռոբոտաշինության խմբակի ստեղծում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով: 2. Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում	Կառավարման խորհուրդ, տնօրեն,Խորհրդակ ցական մարմիններ	2023-2024թթ.	500,000 ՀՀդրամ (տարեկան)	1. Հոգաբարձունե րիխորհրդի ձևավորման անհնարինություն 2. Ֆինանսակա նմիջոցների բացակայություն

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողու-թյուններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կանմիջոցներ	Հնարավոր վտանգներ
Բակումմարզահրապարակներիկառուցում	1. Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով: 2.Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում 3. ՊՆ նախարարությանաջակցության ակնկալում	Կառավարմանխորհուրդ,տնօրեն,Ծնողականխորհուրդ,Քաղ.Պաշտպանության շտաբիպետ	2023-2027թթ.	Պայմանավորվածտվյալտարվա ֆինբյուջեով	1. Հոգաբարձուների նշրջանավարտներ իխորհրդի ձևավորման անհնարինություն 2. Ֆինանսական միջոցների բացա-կայություն
Արտադասարանական խմբակների ստեղծում	1.Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում 2.Հետաքրքրություն գեղագիտական մշակույթի նկատմամբ	Տնօրեն,մանկավարժական կոլեկտիվ	2023-2027թթ	Պայմանավորված տվյալ տարվա ֆին բյուջեով	Ֆինանսական միջոցների բացա-կայություն
Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցման գործարկում	1.Մասնակցային մշակույթև կոմպետենցիաների վրա հիմնված դպրոցների հետ համագործակցություն	Տնօրեն,մանկավարժական համակազմ	2023-2027թթ.		Մարզում նման կարիքներ ունեցող դպրոցների մեծ թիվ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կանմիջոցներ	Հնարավոր վտանգներ
Լրացուցիչկրթական ծրագրերով նորամուծությունների ներդնում	1.Համապատասխան պահանջարկի և հնարավորությունների դեպքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն	Տնօրեն	2023-2024թթ.	Պայմանավ որվածտվյալտարվա ֆին. բյուջեով	Սովորողների պասիվ մոտեցում
Տարբեր մրցույթների՝ սպորտային,բնապահպանական ,գիտական մրցույթների մասնակցություն	1.Միջազգային կրթականծրագրերից ստացվող նյութական և ֆինանսական աջակցություն	Տնօրեն,մանկավարժականհամակազմ	2023-2027թթ.		Սովորողների պասիվ մոտեցում
Էկոլոգիական կուլտուրայի,շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի բարձրացում	1.Avesome Nature Armenia բնապահպանականծրագրի հետ համագործակցություն,Կայուն զարացման համահայկական հիմնադրամ	Տնօրեն,մանկավարժական համակազմ	2023-2027թթ.		Սովորողների պասիվ մոտեցում

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կանմիջոցներ	Հնարավոր վտանգներ
Դպրոցի հիմնի,տարբերանշանի,ազգային մշակույթի պատմության հիմնում,ստեղծում	1.Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում	Տնօրեն,մանկավարժական համակազմ	2023-2024թթ.	Պայմանավորված տվյալ տարվա ֆին. բյուջեով	Ֆինանսական միջոցների բացակայություն
Միջազգային ծրագրերի մասնակցություն	1.Իթվինինգ պլյուս eTwinning+, PHInternational...	Տնօրեն,մանկավարժական համակազմ	2023-2024թթ.	Պայմանավորվածտվյալտարվ ա ֆին. բյուջեով	Մանկավարժական կոլեկտիվի պասիվ մոտեցում
Մանկավարժական անձնակազմի միջինից բարձր տարիք	1.Նախապատրաստել նոր սերնդի մուտքը կոլեկտիվ, Կատարել համայնքում մանկա-վարժական կադրերի հաշվառում:	Տնօրենություն	2023-2027թթ.		Համայնքում մանկավարժական կադրերի պակաս
Արտաբյուջետային միջոցների հոսքի բացակայություն	1.Հնարավորության դեպքում իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն և ստացված շահույթն օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով:	Տնօրեն	2023-2027թթ.		Ֆինանսական մի-ջոցների բացակա-յություն, ձեռնար-կատիրական գոր-ծունեության իրա-կանացման դժվա-ր ություն

26

Առկա հիմն ախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատու-ներ	Կատարման ժամանակա-ցույց	Ֆինանսա-կան միջոցներ	Հնարավոր վտանգներ
Ազգային փոքրամ ասնությունների մշակույթի պահպ անում և անդրադարձ	1.Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում 2.Հետաքրքրություն ազգային փոքրամասնության նկատմամբ	Տնօրեն,մանկավար ժականհամակազմ, խորհրդակացական մարմիններ	2023-2027թթ.	Պայմանավ որված տվյալ տարվա ֆին. բյուջեով	Ազգային փոքրամա սնություն կազմող սովորողների պասիվություն
Դասասենյակների կահավորում	1.Պետական ֆինանսավորման միջոց-ների արդյունավետ օգտագործում 2.Հետաքրքրություն լեզուների նկատմամբ	Տնօրեն,մանկավար ժականհամակազմ, խորհրդակացական մարմիններ	2023-2027թթ.	500,000 ՀՀդրամ	Ֆինանսականմիջ ոցների բացա-կայություն
Մասնագիտական կողմնորոշում	Համագործակցություն ՀՀ ԲՈՒՀ-երին միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ	Տնօրեն,մանկավար ժականհամակազմ, խորհրդակացական մարմիններ	2023-2027թթ.		Սովորողների պասիվվերաբ երմունք
Ներառական կրթ ության իրականցում	1. 1.Դիմել լիազոր մարմնին խնդիրը լուծելու խնդրանքով: 2.Պետական ֆինանսավորման միջոց ների արդյունավետ օգտագործում	Տնօրեն,մանկավար ժականհամակազմ, խորհրդակացական մարմիններ	2023-2027թթ	Պայմանավ որված տվյալ տարվա ֆինբյուջեո վ	ԿԱՊԿՈՒ երեխաների բաց ակայություն
Սոց.անապահովընտ ա նիքների,միակողմանի ներկկողմանիծնողազ ուրկերեխաներիհաշվ առում:	1.Նրանց օգնելու նպատակով համագործակցել համայքապետարանի հետ: 2.Պետական ֆինանսավորման միջոցների արդյունավետ օգտագործում	Տնօրեն,մանկավա րժական համակազ մ	2023-2027թթ	Պայմանա վ որավծ տվյալ տարվա ֆին. բյուջեով	Սոց.անապահովե ր եխաների բացակայ ույուն

ԲԱԺԻՆ 7. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Նշանակել/հրամանագրել/ավագհերթապահներ:	Մշտապես	Տնօրեն	
2.	Ներքին և անհատական իրավական ակտերը /հրամանները/, ժամանակացույցերը,ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող փաստաթղթերը /կամ դրանցքաղվածքները/ փակցնելցուցատախտակներիվրա:	Մշտապես	Տնօրեն	
3.	Թարմացնել ուսուցիչների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի դրույթները,գործնական միջոցներ ձեռնարկել պայմանագրային պարտավորությունները իրականացնելու ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
4.	Ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպելո ւնպատակով աշխատողների նկատմամբ կիրառել խրախուսմանմիջոցներ և կարգապահական տույժեր:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
5.	Ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով աշակերտների նկատմամբ կիրառել խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
6.	Սահմանված կարգով ու ժամկետներում վարել աշխատաժամանակի հաշվարկիտեղեկագիրը:Կազմել ամենօրյա հաճախումների հաշվառման մատյան:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,հաշվապահ,	

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Կատարելդպրոցի սպասարկման տարածքի 1-5 տարեկաներեխաների հաշվառում:	Ապրիլ-օգոստոս	Տնօրեն	
2.	Կազմել և մանկխորհրդի քննարկման ներկայացնել տարեկան աշխատանքայինպլանը:	20-31օգոստոսի	Դասղեկներ	
3.	Կազմել 2023-2024 ուս տարվա ուսումնական պլանի նախագիծը և ուսումնական ժամանակացույցը:	20-31օգոստոսի	Տնօրեն,	
4.	Կատարել դասաբաշխում և կազմել դասացուցակ՝ պահպանելով դրա կազմմանմանկավարժականնսանիտարահիգենիկպահանջները:	20-31օգոստոսի	Տնօրեն, մ/մ նախագահներ	
5.	Ապահովել ամառային առաջադրանք ստացած աշակերտների վերաքննությունների գործընթացը:	20-30օգոստոսի	Համապատասխան ուսուցիչներ	
6.	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշ-խավորված մեթոդական ձեռնարկներով:	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրեն,մ/մ նախագահ,գրադարանավար	
7.	Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Տնօրինություն ներկայացնել թեմատիկ պլաններում պետական առարկայական		Տնօրեն	

	ծրագրերի և չափորոշիչների համապատասխանության մասին գրավոր հաշվետվություն:	1-10սեպտեմբեր	մ/մ նախագահներ	
8.	Ուսուցիչների, դասղեկների, մ/մ նախագահների հետ պարբերաբար տանել բացատրական աշխատանքներ,կազմակերպել խորհրդատվական-մեթոդական լսումներ՝ուսումնադաստիարակչական գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով:	Շաբաթը մեկ անգամ	Տնօրեն	
9	Վերահսկել ուսուցիչների կողմից համագործակցային ուսուցման, աշակերտակենտրոն դաս կազմակերպելու, դասավանդման ընթացքում արդիական մանկավարժության և նորագույն մեթոդների կիրառման գործընթացը:	Մշտապես	Տնօրեն,մ/մ նախագահ	
10	Ամեն օր դասերը սկսելուց առաջ պարտադիր կարգով ստուգել ուսուցիչներիկազմած օրվադասի պլանները,հաստատել դրանք՝համեմատելով թեմատիկ պլանների հետ:	Մշտապես	Տնօրեն,	
11	Անցկացնել ներդպրոցական մրցույթներ՝ նախապես կազմված /հաստատված/առաջադրանքներով:	Դեկտեմբեր	Հանձնաժողով	
12	Տարեկան երկու անգամ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից 7-9-րդդասարաններում՝տարբեր առարկաներից:	Դեկտեմբեր, ապրիլ	Տնօրեն,,մ/մնախագահներ	
13	Ստուգողական գրավոր արդյունքները քննարկել առարկայական մասնախմբում նմանկխորհրդի նիստերում:	Դեկտեմբեր, ապրիլ	Տնօրեն,,մ/մնախագահներ	
14	Ըստ տնօրինության կողմից հաստատված ժամանակացույցի՝ համապատասխանուղեցույցերով,4-րդդասարանի աշակերտներին նախապատրատել	1,2-րդ կիսամյակ	Տնօրեն,	

	փոխադրական, իսկ 9,-րդ դասարանի աշակերտներին նախապատրաստել ավարտական քննություններին:		համապատասխան ուսուցիչներ	
15	Քննական դասարանում անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ,աշակերտներին նախապատրաստել քննություններին :	Ապրիլ-մայիս	Տնօրինություն, ուսուցիչներ	
16	Ըստ տնօրենության կողմից հաստատված ժամանակացույցի՝ կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ քննական դասարանում:	Մայիս	Համապատասխան ուսուցիչներ	
17	Կազմել քննական հանձնաժողովներ, նշանակել կազմակերպիչներ և հերթապահներ,ուսուցիչներին,աշակերտներինև նրանց ծնողներին ծանոթացնել քննական ընթացակարգերին:	Մայիս	Տնօրինություն	
18	Սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել փոխադրական քննությունները:Ժամանակին ապահովել փաստաթղթերի լրացումն ու տրամադրումը ԿԳՄՍ,վարչություն և ԳԹԿ:	Հունիս	Տնօրինություն	

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողանձինք	Նշում
1.	Կահավորել դասասենյակները և ուսումնական կաբինետները՝ դրանք հագեցնելով ուսումնադիդակտիկ նյութերով:	Օգոստոս-սեպտեմբեր	Դասղեկներ գրադարանավար	
2.	Բարելավել և թարմացնելկաբինետների վահանակները, օժանդակել դասղեկներին իրպարտականությունները կատարելու համար:	Օգոստոս,սեպտեմբեր, Մշտապես	Տնօրեն, Դասղեկներ	
3.	Աշակերտներին ապահովել դասագրքերով: Մշակել և կազմել համապատասխան փաստաթղթեր:	Սեպտեմբեր	Տնօրեն,գրադարանավար, դասղեկներ	
4.	Հետևել, որ դասը հագեցած լինի ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով և դիդակտիկ պարագաներով:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն	
5.	Հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան: Օգտագործել առկա տեխնիկականմիջոցները,քարտեզները,ատլասները,տարբերդիդակտիկ պաստառները՝հսկողությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն,	
6.	Անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:	Դեկտեմբեր, ապրիլ	Տնօրեն	
7	Սահմանված կարգով ձևավորել աշակերտական ակտիվ և օժանդակել դրա գործունեությանը:	Սեպտեմբեր	ուսուցիչներ	

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողանձինք	Նշում
1.	Կազմել և հաստատման ներկայացնել տարեկան աշխատանքային պլանը:	20-31 օգոստոսի	Տնօրեն	
2.	Կազմել և հաստատման ներկայացնել տարեկան աշխատանքային պլանը:	20-31 օգոստոսի	Գրադարանավար ԴԱԿ	
3.	Հանձնարարել և օգնել դասղեկներին կազմել տարեկան աշխատանքայինն պլան և ներկայացնել հաստատման:	20-31 օգոստոսի	Տնօրեն	
4.	Պարբերաբար աշխատանք տանել դժվար դաստիարակվող, չառաջադիմող,երկտարեցի երեխաների և նրանց ծնողներիհետ:	Ուստարվա ընթացքում	Համապատասխան ուսուցիչներ	
5.	Միջոցառումներում և ուսման մեջ արժանավոր աշակերտներին ներկայացնել խրախուսման:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	
6.	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկական ժամ՝ այն ծառայեցնելով սովորողների բազմակողմանի դաստիարակության առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	Ըստ ժամանակացույցի	Դասղեկներ	
7.	Կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ, հետևել, որ դրանք կրեն ուսուցողականն դաստիարակչական բնույթ:	Ուստարվա ընթացքում	Տնօրենություն, դասղեկներ	

«

8.	Ձևավորել<<Պատանի ստեղծագործող>>,<<Պատանի բնագետ>>ակումբները:	Մշտապես	Դասղեկներ ուսուցիչներ	
9	Հաշվառել սոց.անապահով ընտանիքների, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին: Նրանց օգնելու նպատակով համագործակցել համայքապետարանի հետ:	Սեպտեմբեր	Տնօրենություն, դասղեկներ	

ՈՒՍՈՒՄՆԱԴԻՏՈՂԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Կազմել և գործածության մեջ դնել ուսուցիչների բացակայությունների տեղեկագիր:	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրեն,	
2.	Ստուգել և հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները: Տնօրինություն ներկայացնել թեմատիկ պլաններում պետական առարկայական ծրագրերի և չափորոշիչների համապատասխանության մասին գրավոր հաշվետվություն:	1-10 սեպտեմբեր	Տնօրեն,մ/մ նախագահներ	
3.	Սահմանել խիստ վերահսկողություն պարբերաբար ուշացող և անհարգելի բացակայող սովորողների նկատմամբ:	Ուս տարվա ընթացքում	Դասղեկներ	

4.	Կատարել նպատակային դասալսումներ: Դասալսումները քննարկել նույն օրը ուսուցչի հետ՝ ստորագրությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ,մ/մ նախագահներ,դասղեկներ	
5.	Կազմակերպել և հետևել էլեկտրոնային մատյանի վարմանը: Կանխել ուշացած գնահատականների նշանակումը և գրանցումները:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,	
6.	Ուսումնասիրել դասղեկական ժամերի դասավանդման գործընթացը՝ ըստ ժամանակացույցի:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,	
7	Համակարգել ուսուցիչների բաց թողած, փոխարինած և լրացուցիչ պարապածդասաժամերը: Արդյունքները ներկայացնել տնօրենին և հաշվապահին աշխատավարձի ժամանակին հաշվարկելու նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
8	Կազմել սովորողների հաճախումների հաշվառման մատյան: Յուրաքանչյուր ամսվավերջում տնօրինության խորհրդակցությունում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	Մշտապես	Դասղեկներ	
9	Պարբերաբար ստուգել էլեկտրոնային դասամատյանի վարման վիճակը:	Շաբաթը մեկ անգամ	Տնօրեն	
10	Ստուգել աշակերտական տետրերի վարման վիճակը,դասագրքերի առկայությունը:	Շաբաթը մեկ անգամ	Տնօրեն	

11	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը:Արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,	
12	Ուսումնասիրել մասնախմբի կատարած աշխատանքը:Արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
13	Ուսումնասիրել գրադարանի գործունեությունը: Արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
14	Հետևել ուսումնադաստիարակչական ընդհանուր գործունեությանը, կատարել լսումներ և քննարկումներ՝ արդյունքները քննարկելով մանկխորհրդում:	Ըստ ժամանակա-ցույցի	Տնօրեն	
15	Վերահսկել մատենավարության կարգի պահպանման վիճակը, տալ անհրաժեշտցուցումներ,մշակելօրինակելի ձևեր:	Մշտապես	Տնօրեն	
16	Ստուգել թեմատիկ և գործնական աշխատանքների կատարման ընթացքը բոլորառարկաներից:	Նոյեմբեր,մարտ	Տնօրեն, մ/մնախագահներ	
17	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը,արդյունքները քննարկելտնօրենությանընդլայնվածնիստերում:	Նոյեմբեր, Մարտի վերջում	Տնօրեն, մ/մնախագահներ	
18	Ստուգել տարբեր առարկաներից տրված գործնական և թեմատիկ աշխատանքների քանակը, որակը, գնահատման համապատասխանությունը՝ արդյունքները քննարկելով մանկխորհրդի նիստերում:	Կիսամյակների վերջում	Տնօրեն մ/մ նախագահներ	

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՍՆԱԽՄԲԻ ՀԵՏ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Հանձնարարել առարկայական մասնախմբին կազմել տարեկան աշխատանքային պլան և ներկայացնել հաստատման:	Օգոստոս	Տնօրեն,մ/մ նախագահ	
2.	Կազմել և հաստատման ներկայացնել տարեկան աշխատանքային պլանը:	19-31 օգոստոսի	մ/մ նախագահ	
3.	Օգնել մասնախմբին նախապատրաստելու իր կանոնադրությունը, աշխատանքային պլանը և առաջիկա նիստերը:	Մինչև 10-ը սեպտեմբերի	Տնօրեն մ/մ նախագահ	
4.	Անցկացնել առարկայական մասնախմբի հետ սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբի կատարած ամսական հաշվետվությունը:	Ամիսը մեկանգամ	Տնօրեն, , մ/մ նախագահ	
5.	Ստացվող մեթոդամանկավարժական և ուսումնաօժանդակ գրականությունը,ամսագրերը, ձեռնարկները ժամանակին տրամադրել համապատասխան մասնախմբերին՝ վարելով դրանց հատկացման առանձին մատյան:	Մշտապես	մ/մ նախագահ,գրադ արանավար	
6.	Յուրաքանչյուր ուսուցչից պահանջել կազմակերպելու տարեկան առվազն 2-3 բաց դաս, 4-5 փոխադարձ դասալսում՝ արձանագրելով դրանք:	Ուս.տարվա ընթացքում	Տնօրեն, մ/մ նախագահ	
7.	Ստուգել մասնախմբի նիստերի արձանագրությունների մատյանիվարման գործընթացը, տալ անհրաժեշտ ցուցումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,	

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

№	Աշխատանքիբովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Ստանալ պատվիրված դասագրքերը, կարգի բերել գրադարանը՝ հնարավորինս վերանորոգելով դասագրքերը:	20 օգոստոս-5սեպտեմբեր	Տնօրեն գրադարանավար	
2.	Վերահսկել դասագրքերի պահպանման, խնամքի նորմերը	Ուս տարվաբն թացքում	Տնօրեն,գրադարանավար ,դասղեկներ	
3.	Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը նդրանք նախապատրաստել բաժանման ըստ դասարանների:	Օգոստոս	գրադարանավար	
4.	Օգնել ուսուցիչներին կազմելու աշխատանքային սխեմաներ, նյութեր թեմատիկ պլանավորումներ, հաստատել դրանք՝ տալով անհրաժեշտցուցումներ:	Օգոստոս	Տնօրեն մ/մ նախագահ	
5.	Վերանայել պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը:Ըստ պարտավորությունների համակարգել դրանց վարումը:	Օգոստոս, սեպտեմբեր	Տնօրեն	
6.	Ստուգել և կարգի բերել աշակերտների և աշխատողների անձնական գործերը:	Օգոստոս, Սեպտեմբեր	Տնօրեն,դասղեկներ	
7.	Հրավիրել տնօրենության խորհրդակցություն՝ արձանագրելով հանձնա-ռարականները:	յուրաքանչյուրերեքշաբթի	Տնօրեն	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Սահմանված կարգով ձևավորել դասարանական ծնողական խոր-հուրդներ՝ ապահովելով ծնողների մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	Սեպտեմբեր	դասղեկներ	
2.	Ծնողների հետ կնքել դասագրքերը վարձույթով տրամադրելու մասին պայմանագրեր,դրանք ամրագրելով դասղեկի պլանում:	Սեպտեմբեր	Տնօրենություն, դասղեկներ,գր աղարանավար	
3.	Ուստարվա ընթացքում հրավիրել դասարանական ծնողական ժողովներ սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	Տնօրենություն, դասղեկներ	
4.	Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-ծնող-դպրոց-ընտանիք կապը:	Ուստարվա ընթացքում	դասղեկներ	
5.	Հաշվառել սոց.անապահով ընտանիքների, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկերեխաներին:Նրանցօգնելունպատակովհամագործակցելհամայքապետ ար անհիետ:	Սեպտեմբեր	Տնօրինություն	
6.	Սոց.անապահով ընտանիքների, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով կազմել ցուցակ՝ համաձայնեցնելով մանկխորհրդի և ծնող խորհրդի հետ:	Սեպտեմբեր	Տնօրինություն, դասղեկներ,ծն ող. խորհուրդ	

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Նոր ուստարվա համար նախապատրաստել շենքը, դասասենյակները, ուսումնական գույքը և այլ սարքավորումներ:	Օգոստոս	Տնօրեն	
2.	Պարբերաբար կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ:	Սեպտեմբեր, հոկտեմբեր, մարտ	Դասղեկներ	
3.	Պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ, սովորողերի ջանքերով բարեկարգել դպրոցի բակը:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	
4.	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	Ուստարվա ընթացքում	Տնտեսվար	
5.	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի բակը,հրապարակը և սանհանգույցը:	Ուստարվա ընթացքում	Սպասարկող անձնակազմ	
6.	Դպրոցը մշտապես պահել մաքուր վիճակում, ուսումնական տեղամասերում իրականացնել ախտահանիչ միջոցառումներ:	Ուստարվա ընթացքում	Սպասարկո ղանձնակազմ	
7.	Հետևել և վերահսկել ջեռուցման աշխատանքը: Ապահովել անվտանգության կանոնների պահպանման գործընթացը:	Ջեռուցման սեզոնում	Սպասարկող կազմ	
8	Ապրիլ ամիսը հայտարարել սանիտարական, բարեկարգման, կանաչապատման և ծառատնկման միամսյակ:	Ապրիլ	Տնօրինություն	

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Կազմել ծախսերի նախահաշիվն ու հաստիքային ցուցակը, քննարկել խորհրդի նիստումն ներկայացնել լիազոր մարմին :	Սեպտեմբեր հունվար	Տնօրեն,հաշվապահ	
2.	Հաշվապահական հաշվառումը, ֆինանսատնտեսական փաստաթղթերը կազմել և վարելսահմանված կարգով: Ապահովել հաշվետվությունների ժամանակին կազմումն ուտրամադրումը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն,հաշվապահ	
3.	Ապահովելաշխատավարձիժամանակին հաշվումնուվճարումը:	Յուր.ամիս	Տնօրեն,հաշվապահ	
4.	Կատարել ապրանքանյութական արժեքների հաշվառում/գույքագրում/:	Նոյեմբեր	Հանձնաժողով	
5.	Կազմել տարիֆիկացիոն մատյանը և ներկայացնել հաստատման սահմանված ժամկետներում:	Սեպտեմբեր հունվար	Տարիֆիկացիոն հանձնաժողով	
6.	Դասագրքերի վարձավճարների հավաքագրում , մուտքագրում	Սեպտեմբեր, հոկտեմբեր	Տնօրեն,գրադարանավար, հաշվապահ	

ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձինք	Նշում
1.	Կազմակերպել հանդիսավոր հավաք՝ նվիրված«Գիտելիքի և դպրության օրվան»:	Սեպտեմբերի1	Տնօրինությոն	
2.	Կազմակերպել հանդիսավոր ցերեկույթ-միջոցառում՝ նվիրված «Անկախության օրվան»:	Սեպտեմբերի21	դասղեկներ	
3.	Նախապեսկազմված /հաստատված/ պլանի կազմակերպել առարկայական շաբաթներ, տասնօրյակներ:	Ըստժամանա-կացույցի	Մասնախում Բ ,ուսուցիչներ	
4.	Կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ/բաց դաս, շարադրություն, հանդես/՝նվիրված Մայրենի լեզվին:	Մշտապես	Մասնախում Բ ,ուսուցիչներ	
5.	Կազմակերպել աշակերտական ինքնավարության օր Ուսուցչիտոնի կապակցությամբ: Բարձր դասարանների աշակերտները հանդես են գալու ուսուցչի դերում:	հոկտեմբերի5	, դասղեկներ	
6.	Արցախյան պատերազմում զոհված հայորդիների հիշատակին նվիրվածմիջոցառում:	հոկտեմբեր	դասղեկներ	
7	Կազմակերպել միջոցառում նվիրված Հայոց ազգային բանակի տարեդարձին:	հունվարի 28	դասղեկներ	
8	Ձևավորել պաստառներ,ուսուցողական նյութեր՝նվիրված մեծանուն հայորդիների:	Սեպտեմբեր-մայիս	մասնախումբ ,գրադարանավար	

9	Կազմակերպել և անցկացնել«Սահմանադրության դաս»թեմայով հատուկ դասաժամ 3-4-րդ դասարաններում:	15 սեպտեմբերի 1-ին դասաժամ	ուսուցիչներ	
10	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, ստեղծել վահանակներ,պատիթերթեր,հոբելյանական պլակատներ:	Ուստարվաընթացքում	Դասղեկներ	
11	ՀՀ պետական դրոշը մշտապեսամրացնել դպրոցի շքամուտքի տեսանելի մասում:	Մշտապես	Տնօրինություն	
12	Յուրաքանչյուր երկուշաբթի օր դասերը սկսելուց առաջ պարտադիր կարգով կատարել ՀՀ օրհներգը:	Յուրաքանչյուր երկուշաբթի	Դասղեկներ	
13	Անցկացնել միջդասարանական մրցումներ տարբեր մարզաձևերից:	Հոկտեմբեր,ապրիլ	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
14.	Կազմակերպել հանդիսավոր արարողությունհարգանքի տուրք Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին:	7-ը դեկտեմբերի	Դասղեկներ	
15.	Կազմակերպել և անցկացնել «Քաղպաշտպանության օր» միջոցառումը՝ ըստնախապեսհաստատվածպլանի:	1-ըմարտի	դասղեկներ	
16	Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում	8-ըմարտի	դասղեկներ	
18	Ապրիլի 7-ը որպես մայրության, գարնան և սիրո տոն նշելտարբեր միջոցառումներով, ձևավորել վահանակ «Հայ բանաստեղծները գարնան մասին»:	Ապրիլի 1ին շաբաթ	դասղեկներ	
19	Կազմակերպել բաց դասեր նվիրված Հայոց մեծ Եղեռնի տարելիցին, արցախյան ,պատերազմների Հերոս Նահատակների հիշատակին:	Ապրիլ -նոյեմբեր	Տնօրինություն	
20	Կազմակերպել միջոցառում նվիրված մայիսյան հաղթանակներին	Մայիսի 9	դասղեկներ	
21	Կազմակերպել միջոցառում՝ նվիրված «Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրվան»:	28-ըմայիսի	Տնօրինություն	

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

№	Օրակարգային հարցեր	Անցկացման ժամկետը	Զեկուցողանձինք
1-ՆՆԻՍ	1. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեվերջյան արդյունքների ամփոփում: 2. Տնօրենի տեղակալների //, մեթոդ միավորման նախագահների,դասղեկների,տարեկանհաշվետվությունները տվյալ ուստարում կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման մասին: 3. Դպրոցի փոխադրական և ավարտական դասարաններում ամառային առաջադրանքների, վերաքննությունների հանձնման, ավարտական փաստաթղթերի տրման մասին: 4. Տվյալ ուսումնական տարվա համադպրոցական միջոցառումների և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի/ծրագրի/մասին: 5. Տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանի, դպրոցականպարտադիր ժամաքանակի բաշխման մասին: 6. Տվյալ ուսումնական տարվա ժամաքանակի բաշխման մասին:	30-31.08	Տնօրեն
2-ՐԴԻՍ	1. Առարկայական ծրագրերի և չափորոշիչների պահանջների իրականացման ընթացքի, ուսուցման մեթոդների ակտիվացման և դրանց գործնական կիրառման մակարդակիմասին: 2. Աշխատանքային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների կատարման մասին: 3. Աշխատանքային ռեժիմի/ կանոնակարգի/ մեջ փոփոխություն կատարելու մասին:	28.10-03.11	Տնօրեն

3-	1. Տվյալ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի աշակերտների առաջադիմության,տնօրենությանկողմից տրված ստուգողական գրավոր աշխատանքների և առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի արդյունքների ամփոփում: 2. Տվյալ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում կատարված ուսումնադաստիա-բակչական աշխատանքների մասին: 3. Տվյալ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում կատարված դաստիարակչական,արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների մասին: 4. Տվյալ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում մասնախմբերի կատարած աշխատանքների մասին:	26.12կամ10.01	Տնօրեն մասնախմբերի ղեկավարներ
4-ՐԴԵՀՍ	1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակի և դրա բարձրացմանմասին: 2. Առարկայական ծրագրերի կատարողականի մասին: 3. «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին ուսուցչի թեկնածություն առաջադրելու մասին:	18-20.03	Տնօրեն
5-ՐԴԵՀՍ	1. Տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության տնօրինության կողմից տրված ստուգողական գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում: 2. 4-9-րդդասարանների աշակերտներին փոխադրական քննություններին թույլատրելու, դասարանից դասարան փոխադրելու, նույն դասարանում թողնելու և ամառային առաջադրանք տալու մասին:	22-24.05	Տնօրեն

6-ՐԴԻՍ	1. Տվյալ ուստարվա ավարտական դասարաններում գիտելիքների ստուգումների արդյունքների ամփոփում,ամառային առաջադրանքներ տալու և նույն դասարանում թողնելու մասին: 2. 2-9 դասարանների «գերազանց »առաջադիմություն ունեցող աշակերտներին ՀՀԿԳՄՍ նախարարության գովասանագրով պարգևատրելումասին:	20-30.06	Տնօրեն
7-ՐԴԻՍ	1. Տվյալ ուս տարվա ավարտական դասարանների աշակերտների վերաքննությունների արդյունքների,նույն դասարանում թողնելու մասին: 2. Տվյալ ուսումնական տարվաուսումնական շաբաթվա տևողությունը և աշխատանքային ռեժիմը սահմանելումասին:	22-28.08	Տնօրեն

ԲԱԺԻՆ 8. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ԴՊՐՈՑԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Սովորողների առողջության պահպանում

Սովորողների առողջության պահպանման նպատակով մեր կողմից առաջ քաշված խնդիրները նպատակ ունեն՝

- դպրոցում ապահովել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ(անվտանգ սննդի, լուսային,ջերմային),
- սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,
- պայքարել ծխելու,վտանգավոր սովորությունների դեմ:

Սովորողների առողջության պատշաճպահպանումն ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

- կրթության և դաստիարակության գործընթացում համագործակցել դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի և համայնքի ԱԱՊԿ-ի հետ,
- մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ,
- դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը,
- ուսուցիչների և դասղեկների հետ պարբերաբար անցկացնել քննարկումներ դասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի ռացիոնալ չափերի ապահովման վերաբերյալ,
- միջոցառումների,զեկույցների,քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին(ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ,Քովիդ-19) և դրանց վտանգավորությանը,
- մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթությանառանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության նֆիզիկականդաստիարակության խնդիրները,
- հարստացնել դպրոցի սպորտային բազան,
- ապահովել«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին:

Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և

հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալիբաժինը,որիբաղկացուցիչ մասն է կազմում աշխատանքը ծնողների հետ:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- օգնել սովորողին (հատկապես դեռահասին) առանց սթրեսների հարմարվել «աշխարհում»անընդհատտեղիունեցողփոփոխություններին,
- նպատակաուղղելերեխային՝ազգայիննհամամարդկայինարժեքներիհամակարգում ձևավորվելուորպես ապագաքաղաքացի,
- զարգացնելսովորողներիճանաչողականակտիվությունը,
- աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգայինավանդույթներինկատմամբ՝դարձնելովնրանայդարժեքներիկայունկրողը, պահպանողընփոխանցողը,
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ,
- խթանել սովորողների արտադասարանական և արտադպրոցական ակտիվությունը,
- ապահովել մասնագիտական կողմնորոշումը:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառումէ՝

- դպրոցի անձնակազմը (մասնագիտական կրթական աջակցությունների գծովտնօրենի տեղակալ,դասղեկներ և այլոք),
- ակտիվ ծնողական համայնքը,
- դասարանական անձնակազմը:

Դպրոցի դաստիարակչական միջավայրը հիմնված է աշակերտական ինքնավարության ձևավորման և դպրոցի ավանդույթների վրա:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտէ՝

- դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով,միասնական մանկավարժական պահանջներով,
- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
- ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը,
- ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,
- ապահովել,որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլաններիվրա,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական

միջավայրը և բացահայտելով առկա խնդիրներն ու բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշակերտների միջև, ինչպես նաև աշակերտներին ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, ինչպես նաև միմյանց հետհաղորդակցվելուհամար դրականմիջավայրստեղծելու ուղղությամբ,
- անհրաժեշտ է ստեղծել հոգեբանամանկավարժական վերապատրաստում իրականացնող մարմին, որի գործունեության արդյունքում կբարելավվեն և կամրապնդվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ, աշակերտ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունները,
- յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական մոտեցում, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ,
- դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական և այլ դաստիարակչական ծրագրեր,
- ընդլայնել դասարանների, առանձին աշակերտների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների, ազգային փոքրամասնությունների պատկանող աշակերտների ,ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները,
- մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը,ինքնաքննադատությունը.
- աշխատանքները կազմակերպել այնպես, որ աշակերտների մոտ արժեհամակարգի առաջնայնությունները ճիշտ ձևավորվեն:

Հայրենասիրական դաստիարակություն

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվում է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջաններնեն անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

Զարգացման ծրագրի այս հատվածում արտացոլված միջոցառումները նպատակաուղղված են՝

- սովորողների մոտ արմատավորել ազգային ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացումը,
- նպաստելու հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ

քաղաքացու ձևավորմանը,

- սովորողների կողմից կրճատել ու տարբեր օրինախախտումների և նրանց մոտառկա վնասակար սովորույթների մակարդակը,

- պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ, օրհներգ)բովանդակությունն ու նշանակությունը դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա օրհներգը,
- բարձրացնելու աշակերտների՝ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղվածռազմահայրենասիրական դաստիարակությունը՝միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ,
- նպաստելու հայի ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը (ազգային երգ ու պար, կոխ, ազգային խոհանոց, աստմունք, կիրառական արվեստներ)
- յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորելու սեփական ազգի պատմությանու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը. այդ նպատակով ուղղորդել աշակերտական խորհուրդը՝դարձն ելով վերջինս պետական մտածելակերպի զարգացման դպրոց,
- նպաստելու դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը,դրա արդյունավետ գործունեության մշտականկատարելագործմանը:

Հայրենասիրական դաստիարակության բնագավառում թվարկված ուղենիշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտէ՝

- դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- դպրոցական բոլոր հիմնական միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների առաջավոր մանկավարժական փորձը,
- ուսուցիչների և դպրոցի ղեկավարության կողմից մշտապես և հետևողական կերպով միջոցառումներ ձեռնարկել աշակերտական միջավայրում լայն տարածում ստացած անտարբերության,էգոիզմի,ցինիզմի և չարության դեմ,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ավանդական, ազգային տոների կազմակերպմանն, անցկացմանն, ինչպես նաև ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակունի՝

- բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների

- պատասխանատվությունը,
- ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,
- աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը
- Այդ նպատակով ճշտել՝
- Դպրոց հաճախող այն աշակերտների թիվը,որոնք օգտվում են «Փարոս» ծրագրից,
- երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը,
- միակողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը,
- զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- հաշմանդամություն ունեցող աշակերտների վերաբերյալ տեղեկությունները,
- հաշմանդամ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- նյութապես անապահով սովորողների կազմը,
- ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը,
- միայնակ մոր խնամքի տակ մնացած աշակերտների մասին տվյալներ,
- աշակերտների թիվը, որոնք դպրոց չեն հաճախում վարձու աշխատանք իրականացնելու պատճառով,
- աշակերտների թիվը, որոնց ծնողները դատապարտված են,
- աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում.
- նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտէ՝

- դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեքհիմնական ուղղություններ՝
- ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
- ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
- դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:
- հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը, և տեղեկացված լինեն այն սովորողների մասին,որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ

որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,

- կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար՝
- կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ,
- ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,
- ապահովել ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:
- ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ,
- ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, խրախուսել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին,
- ամրապնդել ծնողական խորհրդի կապը մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

Աշխատանք մանկավարժական համակազմի հետ

Մեծ է մանկավարժի դերը դպրոցում և այն էլ ավելի նշանակալի դարձնելու համարդպրոցում անհրաժեշտ է ձևավորել գիտակցության, միջավայրի և հարաբերությունների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա արժևորել լավագույն մանկավար ժների աշխատանքը:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

- յուրաքանչյուր մանկավարժի համար դպրոցում ստեղծել հարմարավետ ստեղծագործական միջավայր,
- տարածել առաջավոր մանկավարժական փորձը (մասնախմբերի նիստերում, գործնական պարապմունքների, դասալսումների վերլուծության մանկավարժական գիտաժողովների, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ),
- բարելավել մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակը,
- խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մասնագիտական աճը, իսկ առավել արժանիներին օժանդակել տարակարգի
- ստացման գործում:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- մանկավարժներին համարդպրոցում ստեղծել տեղեկատվության միհամակարգ, որի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան մշտապես համալրելու իրենց գիտելիքները առնվազն հետևյալ ուղղություններով՝
- դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ,
- ժամանակակից մանկավարժական նվաճումներ,
- առաջավոր մանկավարժական փորձ,
- հոգեբանություն և մանկավարժություն:
- Ակտիվ ացնել տարրական և միջին դպրոցներում դասավանդող ուսուցիչների կապը ավագ դպրոցի ուսուցիչների հետ,
- փոխադարձ դասալսումների կազմակերպման միջոցով ուսուցիչների միջև պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակում,
- արդյունավետ կազմակերպել և առավել ագույն սօգտագործել կազմակերպված վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է առհասարակ դպրոցում պարտադիր պայման և ավանդույթ դարձնել ցանկացած ուսուցչի կամ դպրոցի ղեկավարի կողմից վերապատրաստումների,դասընթացների,սեմինարների,հանդիպումների,կոնֆերանսների,ժողովների մասնակցության արդյունքում և/ կամ ցանկացած այլ միջոցներով ստացված տեղեկատվության է ական կամ ընդհանուր բաղադրիչների և սկզբունքների փոխանցումն ամբողջ մանկավարժական անձնակազմին՝դպրոցում կազմակերպվող սեմինար քննարկումների միջոցով,
- ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող դասավանդման նորձևերն ու մեթոդները,
- անընդհատ իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործանը նպաստող գործողություններ և միջոցառումներ,
- մշակել դպրոցում առկա խնդիրների՝ ուսուցիչների հետ համատեղ լուծմանն ուղղված մեխանիզմներ ՝նպատակ ունենալով ուսուցիչների մոտ ստեղծել բավարար վստահություն և անձնակազմի լիարժեք անդամ զգալու հնարավորություն,
- հաճախակի կազմակերպվող քննարկումների միջոցով ուսուցիչների մոտ ձևավորել սեփական գործողությունները ինքնավերլուծելու և ինքնագնահատելու մշակույթ,
- աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում,
- անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքներին համապատասխանությունը,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել դպրոցի մեթոդական միավորումների կողմից դպրոցի զարգացման ծրագրում նշված

նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները,

- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել մանկավարժների գործունեությունը հետևյալ ասպարեզներում՝
- ուսուցչի գիտելիքների և մանկավարժական արհեստավարժության պահպանում և կատարելագործում,
- դպրոցական ընդհանուր ավանդույթների, մշակույթի և բարենպաստ մթնոլորտի ձևավորում և պահպանում,
- աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների կատարելագործում,
- կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն:

Աշակերտական ինքնավարության բարելավումը

Աշակերտական ինքնավարությունը 2011թվականի մայիսի17-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 571-Ն հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարում ձևավորվում է աշակերտական ինքնավարության մարմին: Բոլորը աշակերտական ինքնավարության մեջ պետք է տեսնեն ոչ թե երեխայի կամ մի խումբ երեխաների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահման միջոց, այլ քաղաքացիական հասարակության մեջկառավարելու ընդունակությունների ձեռքբերման և քաղաքացիական հասարակությունտեսնելու համոզմունքի ձևավորման հնարավորություն:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զարգացման ծրագրում իմ կողմից նախատեսված միջոցառումների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- Բոլոր սովորողներին կտրամադրվի հնարավորինս ժամանակակից և որակյալ կրթություն,
- Կընդլայնվեն աշակերտների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները,
- Կավելանա աշակերտների առողջության պահպանմանը նպաստող նախապայմանները,
- Աշխատանքները կկազմակերպվեն նյութատեխնիկական նորացված բազայի հիման վրա,
- Կբարելավվեն ուսուցիչների և դասղեկների մասնագիտական և նախաձեռնողական որակները,
- կձևավորվի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ,
- կընդլայնվեն ծնողական և աշակերտական խորհուրդների դերը և ընդգրկվածությունը դպրոցի կառավարման խորհրդում,
- կաճի դպրոցի ֆինանսական հոսքերի արդյունավետությունը,
- կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և իրընտանիքի վերաբերմունքն ուպատասխանատվության զգացումը:

Ակնկալվում է, որ թվարկված բոլոր արդյունքները վերջնահաշվում կնպաստեն դպրոցի վարկանիշային ցուցանիշի աճին՝ խթանելով դեպի դպրոց աշակերտների առավել մեծ ներհոսքը: